«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

30 Օգոստոսի 2023, N 1 - 1 (հարցման կարգով)

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի N 6 - 7 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանային անցակետում ստեղծված իրավիճակը, ինչպես նաև ինտերնետ կապի հետ կապված խնդիրները՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2023 թվականի ապրիլի 18-ի N 6 - 7 որոշմամբ հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի առկա ուսուցմամբ մագիստրատուրայի 2023-2024 ուսումնական տարվա ընդունելության կանոնակարգում» կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

   15-րդ կետի 2-րդ և 3-րդ պարբերությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

   «15. ...Առաջին փուլի դիմորդները շեմային քննությունը հանձնում են 2023 թվականի հունիսի 22-ին, ժամը 12:00-ին, երկրորդ փուլի դիմորդները՝ 2023 թվականի օգոստոսի 31-ին, ժամը 12:00-ին և 2023 թվականի սեպտեմբերի 4-ին, ժամը 12:00-ին: Դիմորդները շեմային քննությունը հանձնում են բանավոր: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դիմորդները շեմային քննությունը հանձնում են առցանց:

   Ընդունելության առաջին փուլի արդյունքները հրապարակվում են մինչև 2023 թվականի հունիսի 23-ը, իսկ երկրորդ փուլի արդյունքները՝ մինչև 2023 թվականի սեպտեմբերի 4-ը:»:

2. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2023 թ. օգոստոսի 30
Երևան